ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 4-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 գնման պայմանագրում 2024 թվականի փետրվարի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9

04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի

ք. Երևան <<29>> 02 2024թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ե. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշումը և Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 04.11.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1Հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Համաձայնագրով նախատեսված գումարի շրջանակներում աշխատանքներն իրականացնել ըստ Պայմանագրի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
04.11.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրի
«29» «02» 2024թ. կնքված N9 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հիմքերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	մինչև 2023թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611200/1	Երևանի մնջախաղի պետական թատրոնի շենքի վերակառուցման աշխատանքներ	151 389 537	-	-	19 633 000	39 266 000	39 266 000	39 266 000	57 608 463	57 608 463	57 608 463	57 608 463	57 608 463	57 608 463	57 608 463

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023778
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ
ի/հ ք. Երևան, Նուբարաշեն 11փ. 21-26
գ/հ ք. Երևան, Տիգրան Մեծ 63շ. բն.14
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 11500374479000
ՀՎՀՀ 00440841

Տնօրեն՝

_____ Ե. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

BANK AMIO

N 1456-02

«27» 02 2024

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի օգտին՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի հետ 04.11.2019թ. թիվ N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրով «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 17.05.2022թ.-ին թողարկված 10,868,000 (տասը միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար) ՀՀ դրամ գումարի չափով թիվ 3288-02 պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի գործողության ժամկետը համարում ենք երկարաձգված մինչև 30.06.2026 (երեսունը հունիսի երկու հազար քսանվեց) թվականը:

Վարչության նախագահի խորհրդակցական մարմնի/ բիզնեսի կառավարման դեպարտամենտի տնօրենի/ Արման Պետրոսյան

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia
+374 10 59 20 20
www.amiobank.am

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

BANK AMIO

N 1457-02

«27» 02 2024

Բենեֆիցիար՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի օգտին՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի հետ 04.11.2019թ. թիվ N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/2 պայմանագրով «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 16.05.2022թ.-ին թողարկված 10,952,640 (տասը միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումարի չափով թիվ 3271-02 պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի գործողության ժամկետը համարում ենք երկարաձգված մինչև 30.06.2026 (երեսուներկու հունիսի երկու հազար քսանվեց) թվականը:

Վարչության նախագահի խորհրդական, Իրավաբանական
լիզինգի կառավարման դեպարտամենտի տնօրենի ժ/պ Արման Պետրոսյան

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

+374 10 59 20 20
www.amiobank.am